ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«30» ապրիլի 2025 թվականի N: 175-Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2025 թվականի հունվարի 07-ի N 4-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2025 թվականի հիմնական միջոցառումների պլանի» 5-րդ կետի 1-ին ենթակետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում 2025 թվականի մայիսի 22-ին անցկացնել «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը ուժեղ երկրաշարժի դեպքում» թեմայով հրամանատարաշտաբային ուսումնավարժություն (այսուհետ՝ Ուսումնավարժություն):

2. Ուսումնավարժությանը ժամանակին նախապատրաստվելու և արդյունավետ անցկացնելու նպատակով հաստատել՝

1) ՈՒսումնավարժության ղեկավարման խմբի կազմը՝ համաձայն N1 հավելվածի,

2) ՈՒսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) ՈՒսումնավարժությունում ընդգրկված մասնակիցների և ՈՒսումնավարժՈՒթյան միջնորդական խմբերի կազմը՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Ուսումնավարժությունում ընդգրկել՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային տարահանման հանձնաժողովը,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման, առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի, ֆինանսական, գյուղատնտեսության և բնապահպանության, կրթության, մշակույթի և սպորտի, անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությունները,

3) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությունը,
4) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Արթիկի բաժինը,
5)Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Շիրակ» մասնաճյուղը,
6) «Վեոլիա ջուր» փակ բաժնետիրական ընկերության «Հյուսիս» շահագործման տնօրինության «Շիրակ» տեղամասը,
7) «Արթիկ Ճանշին» փակ բաժնետիրական ընկերությունը,
8) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Շիրակի գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղը,
9) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Ղարս» մասնաճյուղը,
10) «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայության» պետական ոչ առևտրային կազմակերպության հյուսիսային տարածաշրջանային կենտրոնը,
11) «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերության ցանցերի շահագործման Շիրակի թիմը,
12) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի ղեկավար կազմը:

4. Ուսումնավարժության ղեկավարի տեղակալին՝

1) ՈՒսումնավարժության նախապատրաստման և անցկացման համար ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ:

5. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

1) մինչև 2025 թվականի ապրիլի 29-ը կազմել և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի հաստատմանը ներկայացնել ՈՒսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերի փաթեթը,
2) կազմակերպել ՈՒսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի,
3) մասնակիցներին ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օգնություն,
4) 2025 թվականի մայիսի 20-ին զեկուցել ՈՒսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին:

6. ՈՒսումնավարժության մասնակիցներին՝

1) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության հետ համատեղ ճշգրտել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2025 թվականի ապրիլի 14-ի N 157-Ա որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի «Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գործողությունների» պլանը,
2) համալրել անձնակազմը համապատասխան գույքով և հանդերձանքով,

3) գործնական միջոցառումների ընթացքում խստագույնս պահպանել անվտանգության կանոնները,

4) պատրաստ լինել ՈՒսումնավարժության ընթացքում իրականացված միջոցառումների մասին ներկայացնելու համապատասխան զեկույցներ:

7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետին՝ սույն որոշման մասին իրազեկել ըստ պատկանելության, ապահովել շտաբային ՈՒսումնավարժության լուսաբանումը մարզի զանգվածային լրատվության միջոցներով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքով:

8. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2025 թվականի
ապրիլի 30-ի N 175-Ա որոշման

ԿԱԶՄ
ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԽՄԲԻ

Դավիթ Առուշանյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետ, հրամանատարաշտաբային ուսումնավարժության ղեկավար,
Ալբերտ Այվազյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ, հրամանատարաշտաբային ուսումնավարժության ղեկավարի տեղակալ,
Արմեն Ափոյան	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետ, հրամանատարաշտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2025 թվականի
ապրիլի 30-ի N175-Ա որոշման

ԿԱԶՄ

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

Էդվարդ Սարոյան-	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի պետ, հրամանատարաշտաբային ուսումնավարժության խաղարկման և վերլուծման խմբի ղեկավար,
Արսեն Ադամյան-	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, հրամանատարաշտաբային ուսումնավարժության գործնական միջոցառումների կազմակերպման խմբի ղեկավար,
Գոռ Ավետիսյան-	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ, հրամանատարաշտաբային ուսումնավարժության խաղարկման և վերլուծման խմբի անդամ,
Հայկ Թևանյան-	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի օպերատիվ հերթապահ հերթափոխի ավագ հրահանգիչ, հրամանատարաշտաբային ուսումնավարժության խաղարկման և վերլուծման խմբի անդամ,
Թագուհի Հակոբյան -	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի օպերատիվ հերթապահ հերթափոխի ավագ հրահանգիչ, շտաբային ուսումնավարժության խաղարկման և ամփոփման խմբի անդամ,
Անանիկ Ոսկանյան-	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար, հրամանատարաշտաբային ուսումնավարժության գործնական միջոցառումների կազմակերպման խմբի անդամ,
Պավլիկ Վարդանյան	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության Արթիկի հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատար, հրամանատարաշտաբային ուսումնավարժության գործնական միջոցառումների կազմակերպման խմբի անդամ,

Վարուժան Դարբինյան	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության Արթիկի հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատարի տեղակալ, հրամանատարաշտաբային ուսումնավարժության գործնական միջոցառումների կազմակերպման խմբի անդամ,
Էմիլ Չոփիկյան	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության Արթիկի հրշեջ փրկարարական ջոկատի հերթափոխի պետ, հրամանատարաշտաբային ուսումնավարժության գործնական միջոցառումների կազմակերպման խմբի անդամ,
Կարեն Հովհաննիսյան	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության Արթիկի հրշեջ փրկարարական ջոկատի հերթափոխի պետ, հրամանատարաշտաբային ուսումնավարժության գործնական միջոցառումների կազմակերպման խմբի անդամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2025 թվականի
ապրիլի 30-ի N 175-Ա որոշման

ԿԱԶՄ
ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ

Հ/Հ	ՈՒսումնավարժության մասնակիցները	Միջնորդներ	
		պաշտոնը	ազգանուն, անուն
1.	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային տարահանման հանձնաժողով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչություն, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչություն, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի ղեկավար կազմ, «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության հյուսիսային տարածաշրջանային կենտրոն	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ (խմբի ղեկավար)	Հովսեփյան Լևոն
2.	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչություն, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ, խմբի անդամ	Գրիգորյան Սուրեն

	համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Արթիկի բաժին, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Շիրակ» մասնաճյուղ, «Արթիկի Ճանշին» փակ բաժնետիրական ընկերություն		
3.	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչություն, «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Շիրակի գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղ, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Ղարս» մասնաճյուղ, «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերության ցանցերի շահագործման Շիրակի թիմ, «Վեոլիա ջուր» փակ բաժնետիրական ընկերության «Հյուսիս» շահագործման տնօրինության «Շիրակ» տեղամաս	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ (խմբի անդամ)	Գասպարյան Սերգեյ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է